ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 010819761

«ԱրմենՏել» ՓԲԸ կողմից բաժանորդին մատուցվող հեռախոսակապի ծառայությունների

«01» 01 2007թ.

Հեռահաղորդակցության ոլորտում «Հելլենիկ Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունը, որը գործում է համաձայն ՀՀ կապի նախարարության կողմից տրված թիվ 60 արտոնագրի (լիցենզիայի), այսուհետ՝ «Օպերատոր» ի դեմս լիազորված անձ Հայաստանի Կոմերցիոն Բաժանորդների սպասարկման պետ Վ.Միքայելյանի մի կողմից, և ՀՀ Կոտայքի մարզի ի դեմս Գառնիի կառավարիչ Գ.Մկրտչյանի այսուհետ «Բաժանորդ» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. Պայմանագրի առարկան

«Օպերատորը» պարտավորվում է սույն պայմանագրի ամբողջ ժամկետի ընթացքում հանրային հավելվածում նշված հեռահաղորդակցության ոլորտում «Բաժանորդին» մատուցել հեռախոսակապի ծառայություններ, իսկ «Բաժանորդը» պարտավորվում է սահմանված կարգով և ժամկետներում կատարել վճարումներ:

## 2. Վճարման կարգը և ժամկետները

2.1 Մատուցված հեռախոսակապի ծառայությունների դիմաց վճարումը կատարվում է ըստ ներկայացված հաշիվների:
2.2 «Օպերատորի» կողմից մատուցված հեռախոսակապի ծառայությունների դիմաց հաշիվները «Բաժանորդին» ներկայացվում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև 20-ը ներառյալ:
2.3 «Օպերատորի» կողմից մատուցված հեռախոսակապի ծառայությունների դիմաց հաշվարկված գումարները «Բաժանորդը» կողմից ենթակա են վճարման հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև վերջին օրը ներառյալ:

## 3. «Օպերատորի» պարտականությունները և իրավունքները

3.1 «Օպերատորը» պարտավոր է
3.1.1 Ելնելով գործող տեխնիկական և տեխնոլոգիական հնարավորություններից ապահովել կայուն և անխափան հեռախոսակապի ծառայություններ.
3.1.2 Իր ցանցի սահմաններում ապահովել հեռախոսային խոսակցությունների գաղտնիությունը:
3.1.3 Սեփական նախաձեռնությամբ կամ «Բաժանորդի» հայտով վերացնել առաջացած խափանումները և ընդհատումները վերականգնել հեռախոսակապի ծառայությունների մատուցման Կանոններով սահմանված ժամկետներում.
3.1.4 Ըստ «Բաժանորդի» դիմումի հեռախոսակապի վերամիացում, հեռախոսագծերում տեղի ունեցած վթարների դեպքերում՝ ամրագրել խափանման օրը, ժամը և կատարել բաժանորդային վարձի պակասեցում չօգտագործված օրերի համար:
3.1.5 Հեռախոսակապի մատուցման պայմանների փոփոխությունների մասին տեղեկացնել «Բաժանորդին» նոր սակագների կիրառման սկսելուց 30 օր առաջ: Այս դրույթի կիրառման պարտավորությունից «Օպերատորը» ազատվում է, եթե [illegible]
3.1.6 «Օպերատորը» պարտավորվում է պայմանագրի 3.2.1 և 3.2.2 կետերում նախատեսված դեպքերում «Բաժանորդի» հեռախոսակապի (գծերի) անջատումը «Բաժանորդի» հեռախոսակապի (գծերի) հատման ժամանակից առնվազն 5 աշխատանքային օր առաջ գրավոր տեղեկացնել Բաժանորդին»
3.2 «Օպերատորը» իրավունք ունի
3.2.1 Անջատել Բաժանորդային հեռախոսակապի (գծերը), հաշվարկային ժամանակահատվածին հաջորդող ամսվա մինչև վերջին օրը ներառյալ հեռախոսակապի ծառայությունների դիմաց վճարումները չկատարելու դեպքում: Հաշվարկային ժամանակահատվածին հաջորդող 2-րդ ամսվա ընթացքում հեռախոսակապի ծառայությունների դիմաց պարտքերի մարման դեպքում անջատված բաժանորդային գծերը ենթակա են միացման:
3.2.2. Լուծել սույն պայմանագիրը 3.2.1կետում սահմանված ժամկետում անջատված բաժանորդային գծերը, հաշվարկային ժամանակահատվածին հաջորդող 2-րդ ամսվա մինչև վերջին օրը ներառյալ հեռախոսակապի ծառայությունների դիմաց պարտքերը չվճարելու դեպքում և դադարեցնել պայմանագրի գործողությունը:
ամսվան հաջորդող ամսվա ընթացքում օգտագործել տեխնիկական ռեսուրսները և վերակառուցման նպատակներով:
3.2.3. Հեռախոսակապի հատման օրվանից 2 (երկու) ամսվա ընթացքում «Բաժանորդի» կողմից պարտքերը չմարելու և վերականգնման դիմումով ծառայության վարձը չմուծելու դեպքում, հեռախոսակապի ծառայությունների մատուցման (նոր տեղադրման) իրականացվում է ընդհանուր հիմունքներով՝ նախկին պարտքերի մարմամբ.
3.2.4. Մինչև պայմանագրի դադարեցումը պահանջել է վճարել բաժանորդային վարձը:

3.2.5 «Բաժանորդից» ստանալով վճարման փոփոխություն՝ «Օպերատորի» բացառիկ իրավունքը հանդիսացող հեռախոսակապի ծառայությունների երկրային և արտերկրյա զանգերի բաշխում. Ինտերնետային ցանցի միջոցով հեռախոսակապի ծառայությունների մատուցում (VoIP) դեպքերում՝ երկրային և միջազգային զանգերի զանգվածների չափով:
3.2.6. Անմիջապես անջատել բաժանորդային հեռախոսահամարը (գծերը) և խզել բաժանորդային պայմանագիրը, եթե

- «Բաժանորդին» տրամադրված հեռախոսագիծը (գծերը), առանց լիազորված մարմնի լիցենզիայի և առանց «Օպերատորի» հետ համաձայնեցման օգտագործվում է շահույթ ստանալու նպատակով.
- «Բաժանորդին» տրամադրված կապի միջոցները օգտագործվում են ՀՀ կապի նախարարության կողմից տրված բնիկ 60 արտոնագրով (կիրառելի ստանդարտներ) «Օպերատորի» բացառիկ իրավունքը հանդիսացող հեռախոսակապի ծառայությունների երկրային և միջազգային զանգերի բաշխման, Ինտերնետային ցանցի միջոցով հեռախոսակապի ծառայությունների մատուցման (VoIP), միջազգային զանգերի անօրինական բաշխման նպատակներով, որի արդյունքում կրում է նյութական վնաս պատճառելով «Օպերատորին»:

## 4. «Բաժանորդի» պարտականությունները և իրավունքները

4.1 «Բաժանորդը» պարտավոր է՝
4.1.1 Մատուցված հեռախոսակապի ծառայությունների համար վճարումները կատարել իրեն ծանուցված, յուրաքանչյուր հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև վերջին օրը ներառյալ:
4.1.2 «Օպերատորին» տեղեկացնել բաժանորդային սարքավորման ձևի (տեսակի) մասին և դրանք պահել սարքին վիճակում:
4.1.3 Զերծ մնալ օժանդակ հեռախոսակապից օգտվելիս նույն բաժանորդային գծի օգտագործող Բաժանորդի համար չարաշահել բարդություններ:
4.1.4. Պայմանագրում նշված հեռախոսաֆիկսված սարքերի մասնագետի իրավունք ունեցող անձի (քաղաքացի կամ կազմակերպության) փոփոխության, երբ բաժանորդի կազմակերպություն է անվանափոխության դեպքերում տեղյակ պահել «Օպերատորին»:
4.1.5 Վճարել մատուցված հեռախոսակապի ծառայությունների համար նաև այն դեպքում, երբ բաժանորդային (վերջնային) սարքավորումը օգտագործվել է այլ անձանց կողմից, անկախ այն բանից համաձայնեցվել է «Բաժանորդի» հետ, թե ոչ:
4.1.6 Չփոխանցել սույն պայմանագրի 1-ին բաժնում նշված կապի միջոցները այլ անձանց (վարձակալության, ենթավարձակալության տրամադրելով):
4.2 «Բաժանորդն» իրավունք ունի՝
4.2.1 Օգտվել ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով հեռախոսակապի ծառայությունների ոլորտում սահմանված արտոնություններից:
4.2.2 Պահանջել հեռախոսակապի ծառայությունների վճարման վերահաշվարկ կամ այդ ծառայություններից հետագայում չօգտվելու դեպքում վճարված դրամական միջոցների վերադարձ:
4.2.3. «Բաժանորդն» ունի ՀՀ օրենսդրությամբ և «Հեռախոսակապի ծառայությունների մատուցման կանոններով» նախատեսված այլ իրավունքներ:

## 5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. «Օպերատորը» օրենսդրությամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում «Բաժանորդի» հանդեպ պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, հեռախոսակապի խափանումները վերացնելու ժամկետները խախտելու համար:
5.2. Հեռախոսակապի ծառայությունների մատուցման ժամկետները խախտելու դեպքում «Բաժանորդն» իրավասու է իր ընտրությամբ՝
ա) «Օպերատորին» նշանակել նոր ժամկետ, որի ընթացքում պետք է մատուցվեն հեռախոսակապի ծառայությունները.
բ) ծառայությունների մատուցման ընթացքում թերությունները հայտնաբերելիս «Բաժանորդը» իրավասու է պահանջել հեռախոսակապի ծառայությունների խափանումների անհապաղ վերացում
գ) «Բաժանորդը» իրավունք ունի պահանջելու պատճառած վնասների հատուցում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
5.3. «Օպերատորը» պատասխանատվություն չի կրում սույն պայմանագրի 3.1.5 կետով սահմանված ժամկետների խախտման դեպքում, եթե դրա կատարման անհնարինությունն առաջացել է ոչ իր մեղքով:
5.4 Հեռախոսակապի ծառայությունների մատուցման ընթացքում «Օպերատորի» և «Բաժանորդի» միջև առաջացած վեճերն ու տարաձայնությունները կարգավորվում են բանակցությունների միջոցով կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
5.5Կողմերը պատասխանատվություն չեն կրում պայմանագրային պարտավորությունները չկատարելու համար երբ դրանք հետևանք են անհաղթահարելի հանգամանքների (բնական աղետներ, պատերազմներ, ՀՀ նախագահի հրամանագրեր և ՀՀ կառավարության որոշումներ և այլն): Նման դեպքերից որևէ մեկի վրա հասնելու դեպքում, Կողմերն այդ մասին պետք է անմիջապես տեղեկացնեն միմյանց.
5.6 «Օպերատորը» պատասխանատվություն չի կրում բաժանորդային (վերջնային) սարքավորումների անսարքությունների հետևանքով հեռախոսակապի խափանումների համար:
5.7 Սույն պայմանագրով նախատեսված դրույթները խախտող Կողմը պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

### 6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և ուժի մեջ է մնում անորոշ ժամանակով, քանի դեռ Կողմերից մեկը գրավոր չի հայտնել այն դադարեցնելու մասին: Ընդ որում, պայմանագրի դադարեցման համար «Բաժանորդը» պետք է [illegible] ժամանակով, իսկ «Օպերատորը» միայն օրենքով սահմանված դեպքերում, ինչպես նաև սույն պայմանագրի 3.2.2 և 3.2.6 կետերի «Բաժանորդի» կողմից խախտման դեպքում:

6.2 Սույն պայմանագրի առարկայի շուրջ Կողմերի միջև նախկինում կնքված համապատասխան պայմանագրից (երից) բխող ֆինանսական պարտավորությունների կատարումը Կողմերի համար պարտադիր է սույն պայմանագրի շրջանակներում:

### 7. Կողմերի իրավաբանական հասցեները

| | |
|---|---|
| «Օպերատոր» | «Բաժանորդ» ՀՀ Նախագահի աշխատակազմ |
| «ԱրմենՏել» ՓԲԸ | (լրիվ անվանումը) |
| ք. Երևան, Ամիրյան 2 | Երևան, Բաղրամյան 26 |
| «Էյչ-Էս-Բի-Սի Հայաստան» բանկի | Հեռ. 52-08-94 58-87-57 |
| «Երևան» մասնաճյուղ | (իրավաբանական և գործունեության հասցեն) |
| հ/հ 001-125707-040 կոդ 21700 | ՀՎՀՀ 00006505 |
| ՀՎՀՀ 02500052 | ՀՀ 900011204014 |
| | (հաշվի համարը, ծառայության մատուցման հասցեն) |

ՀՄԲՎ պետ

Վ. Մկրտանգուլյան

ՀՄԲՎ, ԴՄՍԳ ղեկավար

Վ.Առաքելյան

Հայաստանի Հանրապետություն Երևան
«ԱրմենՏել» ՓԲԸ
ԴՐՈՇՄԱԿԻՉ STAMP № 33
Republic of Armenia Yerevan
ArmenTel Closed Joint Stock Company

թիվ 1 զանգապնտական բաժանմունք

(ստորագրողի պաշտոնը)

Գործերի կառավարիչ

Գ.Մկրտումյան

Կ.Տ.

163 00403 8861

444